

Թիւն մեր և զհամայն հօտին մերոյ՝ մեծապէս կարօտելոց ժամանակիս յայսմիկ կենդանի քարոզութեան բանին կենաց և ուղիղ առաջնորդութեան մտաց ամենեցուն ի շաւիղս անդ ճշմարիտ վարդապետութեան ըստ աւանդութեան ս. Առաքելական եկեղեցւոյս մերոյ: Վասնորոյ և հայրական սիրով յորդոր կարգամբ կամակար յօժարութեամբ փոյթ ունել ամենեցուն Ձեր վառելոյ զսիրտ հաւատացելոց ի սէր խաչեցելոյն վասն Մեր շինելով զմիտս գայթակղելոցն և սարսուցելոցն ի զրկաց

մեծագորով Մօրն մերոյ Լուսոյ և ջամբելով ամենեցուն առհասարակ զկաթն ի մաքուր ստեանց նորին ի փառս Փրկչին մերոյ և ի պարծանս սուրբ եկեղեցւոյ: Այսու ջերմոգին ակնկալութեամբ օրհնեմք զՁեզ և զորս բնդ Ձեզդ են զործակիցք և մնամք աղօթարար:

Ի վերայ իսկականին ստորագրեալ է

Մ Կ Ր Տ Ի Զ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Թիւ 4867

Յ 51 դեկտեմբերի 1896 ամի ելն.

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն—Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ի

Ե Ի

ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՂԸ.

„Յերսն ելն, եւ իւրքն զնա ոչ ընկալան, իսկ որք ընկալան զնա, ետ Նորա իշխանութիւն որդիս Աստուծո: Ըննել, որոց հաւատացն յանուն Նորա:“

Յովհ. Ա. 11, 12:

Դու զայիս ես կրկին, Յիսուս, իմ Փրկիչ... զայիս ես ինչպէս ձմրան պաղ օդի մէջ իջնող կենդանարար ջերմութիւնը, անձկալից լուութեան մէջ հնչող քաղցրաձայն մեղեդին. ինչպէս մխիթարիչ մի հրեշտակ՝ սգաւոր ընտանիքի համար, կարմիր արշալոյս՝ այս խաւարչտին աշխարհի համար... զայիս բարձրանում ես մեր տագնապալից կեանքի հօրիզոնի վերայ՝ խաղաղութիւն ու հաճութիւն սփռում, իջնում ես մեղաւոր մարդկութեան գիրկը՝ կենդանութիւն ու յոյս ներշնչում...:

Օտարների մօտ չես զայիս... Զո՞ յաղթութեան նշանը փայլում է այսօր մեր խեղճ երկրագնաի բոլոր կողմերում: Հազար ու բիւր զանգակների մեղմ զօղանջիւնը Զո՞ հրաշալի զայլուստը մեզ աւետում... Բայց արդեօք նոյնչափ բազմաթիւ են փառաբանական երգով Զեզ ընդառաջողները, կենդանի հաւատոյ բոլոր ջերմութեամբ Զեզ ընդունողները... Ահա մէկը Զո՞ անուան երկրպագու աշխարհի

ամենամեծ կենդրոններից՝ ամենափարթամ մի մայրաքաղաք. խայտաճամուկ բազմութիւնը խռնուում է փողոցներում և հրապարակների վերայ՝ այսօր ևս ինչպէս ամեն օր. գալիս անցնում են մտահոգ մարդիկ՝ կոխ մղելով անազորոյն բաղդի դէմ: Նուաձել ջանալով աշխարհն իրենց անյաղ ցանկութիւնների համար. անցնում են և անհոգ մարդիկ՝ վայելք ու զուարճութիւն որոնելով, անաշխատ զուարճութիւն՝ միշտ նոր և աւելի: Իսկ Զեզ որոնողներ, Զեզ համար կռուողներ—հէր են Նորա, քանիսի՞ մաքոյն է արդեօք անցնում, թէ այսօր աշխարհ իջար Դու՝ մի նոր և սուրբ կեանքի, իսկական երանաւետ երջանկութեան ճանապարհը ցոյց տալու՝ վսեմ ու անպղտոր մի ուրախութեան նուէրներ բերելու...: Մակայն այն, շուայաութեան ու փութորկոտ կրքերի այդ ծովի մէջ ևս կան կղզիներ, ուր հաւատոյ անշէջ կանթեղը վառուում է Զո՞ աննման պատկերի առաջ, ուր խաղաղութեան ու զգաստութեան զրկում ծաղկում են անարատ կեանքի ծաղիկներ: Եւ հէր չեն զանուում այդպիսի կղզիներ. այնտեղ, հեռու հիւսիսում կամ բարձր լեւրան լանջի վերայ, ձեան ահագին շեղջակոյտները ձեղքելով ճանապարհ են բաց անում դէպի Զո՞ անշուք մատրան դուռը. այստեղ, անապատի կիզիչ աւազը ոտաբորիկ կոխելով՝ ժողովուում են մի արմաւենու շուրջ, որի վերայ նկարուած է Զո՞ յաղթութեան պարզ նշանը. անմահական լուսոյ այն մաքուր շո՞

դր՝ որ կաթում է քո երկնաձեւ ոտքերից՝
Մանուկ Արեգակի կաթում, ծաւալում ի
սփիւռս աշխարհի՝ կենդանարար ջերմութիւն
է արդարեւ անդգայ սառնամանիքի ներքոյ
կծկուած ու պաղած սրտերի և միանգամայն
զուարթարար ամոքիչ ցօղ բորբոք յոյգերով
կրակուած կրճքերի համար. քո խաղաղութեան
ու հաճութեան աւետարեր ծիածանը իւր պայ-
ծառ գոյների միապաղաղ նարօտով գրկում կա
պում է այսօր գոյնդգոյն և բազմալեզու մարդ-
կութիւնը՝ մի հոգի մի հաւատ մի ընդհա-
նուր փառաբանութեան սիրոյ սուրբ զգացում
ընծայում նորան։

Մեծ ես Դու, Յիսուս, անանց է և անկողոպ-
տելի քո փառքը. ոչ արհամարհական կասկա-
ծոտ ժպտով քո հրաշալի գալստեան գաղտ-
նիքը քննող փիլիսոփան ու գրագէտը, և ոչ,
ճնշուած ատկութեան դառն մաղձով լի, ըս-
պառնալից բռննցքները քո դէմ ուղղող մո-
լար ամբոխի սանձարձակ ներկայացուցիչը կա-
րող են խել այդ փառքը քեզանից. տես, այն-
տեղ անհաւատ մեծատան զաւակները, գեղա-
դարդ տօնածառի շուրջ խմբուած՝ անմեղ
բերկրութեամբ դէպի քեզ են մեկնում իրենց
մանկական անարատ ձեռները, քեզնից նուէր-
ներ սպասում. այստեղ դաժան բանուորի
փոքրիկ որդին փախել է իւր հօր մօտը կա-
ցարանից, լուսաւոր եկեղեցու մի անկիւնում
կուշ եկած լսում է հրեշտակների քաղցածայն
օրհներգը, և նորա արդար հոգին արձագանգ
է տալիս. ոչ մի ժխտ ասպաղայ փոթորկալից
կեանքում չի ջնջի այլեւս այդ երկնային ներ-
դաշնակութեան հետքը, մինչև որ մի օր քո
հրաշարուեստ մատները կանցնին վերայից, և
թմրած հոգին կզարթնէ խայտալով՝ քո անմահ
անունը փառաբանելու համար։ Դու տեսնում ես
այս բոլորը, Երաժիշտ Փրկիչ. քո ամենատես
աչքից չի փախչում անշուշտ ոչ մէկն այդ ա-
սպաղայ աւելի երջանիկ հաւատով ու արդա-
րութեամբ աւելի հարուստ սերունդի շառա-
ւիղներից. ո՛հ, թող նոքա ամէնքն այսօր քո այդ
ծիծաղախիտ ծով աչքերում երկնային յուսոյ
և բերկրութեան մեծ աւետիքը կարդան՝ ա-
ւելի խոր նայել, աւելի վսեմ և յարատեւ մի
կեանքի խորհուրդներ քննել սովորին, քան
իրենց հայրերն էին նայում ու քննում. ժո-

ղովիւր քո շուրջ, առ բոլորին քո իշխանու-
թեան ներքոյ, որպէս զի քեզ լինին անդա-
կից և որդեկից՝ ժառանգ քո երկնաւոր հօր
թագաւորութեան։

Եւ երբ, ջնաշխարհիկ թագաւոր, ծով ու
ցամաք կանցնիս յաղթական քայլերով, մի աշ-
խարհ կգաս, ուր զեռ հազար ու հազար տա-
րի առաջ քեզ զիմաւորեցին ցնծութեամբ քո
անուան առաջին հաւատացողները, և ոչ մի
արհաւիրք այնուհետեւ կարող եղաւ նորինորոյ
աճող սերունդների կոկորդում խեղդել քո
փրկարար գալստեան օրհներգը՝ «Քրիստոս
Ճնաւ և յայտնեցաւ, աւետիս», կգաս ու ա-
մեն ծուխ մարած, ամեն ձայն լռած կգտնես՝
աւեր ու ամայութիւն քո շուրջն, և ան-
պատասպար ու անպաշտպան մի այրի այդ ա-
ւերակների վերայ՝ ամենողորմ Յիսուս, կանգ
պէտք է չառնես միթէ այդտեղ առ վայրկեան,
կարեկից ու սփոփիչ մի հայեացք ուղղես
դէպի թշուառը. արժան պիտի չհամարես
հանգչիլ մի ըստէ այդ անպատուած ու հալա-
ծուած մօր գրկում՝ կենդանութեան յուսոյ
մի ճրագ վառելով նորա մորմոքուած կրճքի
տակ։ — Ախ, ո՞վ պէտք է հոգայ նորա տարա-
դիր, օտարի դրանը մութացող զաւակների
մասին, ո՞վ պէտք է սովորեցնէ նոցա մայրենի
լեզուաւ քո սուրբ անունը շշնջել՝ եթէ ոչ
ինքնին Դու, Աստուած իմ Յիսուս, որ որբերի
և տնանկների միակ Տէրն ես և խնամողը. մեծու-
թիւն, փառք, ամեն երկրաւոր բարիքներ թող
ուրիշները վայելեն, միայն թէ քո անունը մնայ
անշէջ մեր շրթունքների վերայ. Դու ժողո-
վիւր և պահիր ցանուցիր հօտի թշուառ մնա-
ցորդներին, քո հրաշափառ յայտնութեանդ
շնորհիւ զօրացուր նոցա և տուր «իշխանու-
թիւն որդիս Աստուծոյ լինել։

Կ. Վ.

